Անգլերեն լեզվի զարգացման մակարդակները և գնահատումը

Անգլերեն լեզվի հմտության մակարդակները հիմնված են աշակերտի ELPAC քննության (Կալիֆորնիայի անգլերեն լեզվի հմտության գնահատումներ) կատարման վրա: Ձեր երեխայի մակարդակը գնահատականների զեկույցի անգլերեն լեզվի հմտություն բաժնում է: Մակարդակներից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև՝

Նախնական անգլերեն լեզվի հմտության մակարդակներ (անգլերեն լեզու սովորող աշակերտների համար, ովքեր նոր են Կալիոֆորնիայի դպրոցներում):
•Նախնական վարժ մակարդակի անգլերենի հմտություն (IFEP) - Այս մակարդակում աշակերտներն ունեն լավ զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ: Աշակերտները չեն ստանում անգլերեն լեզվի զարգացման գնահատական:

•Նախապես սկսնակ մակարդակի անգլերեն լեզու սովորող – Այս մակարդակում աշակերտներն ունեն նվազագույն զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ:

•Նախապես միջին մակարդակի անգլերեն լեզու սովորող - Այս մակարդակում աշակերտներն ունեն միջին զարգացած անգլերեն լեզվի բանավոր և գրավոր հմտություններ:

Անգլերեն լեզվի հմտության մակարդակներ (անգլերեն լեզու սովորողների համար, ովքեր նախկինում արձանագրված են եղել Կալիֆորնիայի դպրոցում)
•Մակարդակ 1 սկսնակ – Այս մակարդակում աշակերտները սովորաբար արագ առաջընթաց են ունենում, սովորում են կիրառել անգլերեն լեզուն իրենց կարիքների համար, ինչպես նաև սկսում են հասկանալ և կիրառել ուսումնական բառապաշարը:

•Մակարդակ 2 կամ 3 – ընդլայնվող – Այս մակարդակում աշակերտները բարելավում են իրենց անգլերեն լեզվի հմտությունները ավելի լայն համատեքստերում, սովորում են բառապաշարը և լեզվի կառուցվածքը, և կիրառում են իրենց զարգացող լեզվի հմտություններն ավելի կատարելագործված՝ իրենց տարիքի և դասարանի մակարդակին համապատասխան:

•Մակարդակ 3 կամ 4 – անցումային – Այս մակարդակում աշակերտները շարունակում են սովորել և կիրառել բարձր մակարդակի անգլերեն լեզվի հմտություններ լայնածավալ համատեքստերում, ներառյալ՝ հասկացողությունը, գրելը և խոսելը: Աշակերտներն ամբողջովին ներգրավված են իրենց դասարանի մակարդակին համապատասխան հանձնարարություններում:

ELPAC-ի մակարդակներ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Մակարդակ 4
ELD-ի չափորոշիչներ Հմտության մակարդակներ	**Սկսնակ** — Ստանում է լեզվի հսկայական աջակցություն	**Ընդլայնվող**— Ստանում է միջին մակարդակի լեզվի օգնություն	**Անցումային**—Ստանում է թեթև մակարդակի լեզվի օգնություն	

Անգլերեն լեզվի զարգացման (ELD) ծրագրերի և գնահատականների մասին տեղեկացվածություն

Անգլերեն լեզվի հմտություն ծրագրից բացի, աշակերտները լինում են նաև մեկ այլ ծրագրում (տես ներքևի աղյուսակում): ELD-ի գնահատականը արտացոլում է աշակերտի առաջադիմությունն ու ուսումնական առաջընթացը իրենց ծրագրի և անգլերեն լեզվի հմտության դասակարգման մեջ:

Ծրագիր	Մակարդակ (ընդհանուր)	Նկարագրություն	Գնահատված ոլորտներ	Չգնահատված ոլորտներ
Դասակարգված անգլերենի ներգրավվածություն (Ծրագիր 1)	Նախնական - Սկսնակ Մակարդակ 1 – սկսնակ	Անգլերեն լեզվի ընկալման ծրագիր այն աշակերտների համար, ովքեր անգլերենի սահմանափակ գիտելիքներ ունեն	ELD, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություններ	ELA
Անգլերեն լեզվի հիմնուղի (Ծրագիր 2)	Նախնական - Միջին Մակարդակ 2-3- Ընդլայնվող Մակարդակ 3-4 - Անցումային	Անգլերեն լեզվի ընկալման ծրագիր այն աշակերտների համար, ովքեր խելամիտ հմտություն ունեն անգլերեն լեզվի մեջ:	ELD, ELA, մաթեմատիկա, գիտություն և սոցիալական գիտություններ	Առկա չէ